

ՏԱՐԲԵՐ ՔԻՄԻԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐՈՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԱՂՏՈՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԵՎ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ճանճապանյան Ա.Ն., Թաղևոսյան Ն.Ս., Պողոսյան Ս.Բ., Մուրադյան Ս.Ա.,
Խաչատրյան Բ.Գ., Մայրապետյան Ա.Խ.

Երևանի Մ. Հերացու անվ. պետական բժշկական համալսարանի ԳՀԿ-ի համաճարակաբանական հետազոտությունների, շրջակա միջավայրի որակի և հեռավոր ազդեցության լաբորատորիա, Հայաստան, Երևան

Ազգաբնակչության առողջության և շրջակա միջավայրի վիճակի գնահատումը ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակի կարևորագույն խնդիրներից մեկն է: Տնտեսվարման արդյունքում տեղի ունեցած էկոլոգիական հավասարակշռության խախտումը մեծ վտանգ է ներկայացնում մարդու առողջության և շրջակա միջավայրի համար: Աղտոտիչների շարքում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում թունաքիմիկատները և պարարտանյութերը, ինչը պայմանավորված է նրանց կիրառման լայնածավալությամբ, կենսաբանական ակտիվությամբ, ինչպես գյուղատնտեսական վնասատուների, այնպես էլ մարդու նկատմամբ:

Գոյություն ունեցող տվյալները վկայում են Սևանա լճում և նրա ջրահավաք ավազանում բլորորգանական թունաքիմիկատների (ՀԶՅՀ, ԴԴՏ, ԴԴԵ, ԴԴԴ) մնացորդային քանակների շարունակական շրջանառության և տվյալ տարածաշրջանում մութագեն միացություններով ծանրաբեռնվածության բարձրացման ռիսկի մասին: Տնտեսվարման առկա պայմաններում և նման պրակտիկայի շարունակման դեպքում հանրապետության միակ խմելու ջրի աղբյուր լինելով հանդերձ Սևանա լիճը կարող է վերածվել շրջակա միջավայրի հնարավոր աղտոտման աղբյուրի: Հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ թունաքիմիկատների կիրառումն անբարենպաստ ազդեցություն ունի գյուղական բնակչության, հատկապես երեխաների վրա: Ստացված արդյունքները բնութագրում են այն իրավիճակը, որը ձևավորվել էր կազմակերպված գյուղատնտեսվարման պայմաններում: Սակավաթիվ են նաև ուսումնասիրությունները, որոնք վերաբերում են տարբեր քսենոբիոտիկներով (թունաքիմիկատներ, պարարտանյութեր և այլն) շրջակա միջավայրի աղտոտվածության փաստացի մակարդակների հնարավոր անբարենպաստ ազդեցությանը՝ գյուղական բնակչության առողջության վրա, արդի մասնավոր գյուղատնտեսության պայմաններում: Ելնելով վերոհիշյալից, շրջակա միջավայրի աղտոտվածության մակարդակների ուսումնասիրման և դրա հետ կապված առողջության համար հնարավոր ռիսկերի բացահայտման խնդիրներն ունեն կարևորագույն նշանակություն և մեր հանրապետության համար մտում են անհետաձգելի ու արդիական: Այդ խնդիրների դիտարկման գործում կարևոր և առանձնահատուկ դեր ունեն Արարատյան դաշտավայրը և Սևանա լիճը՝ իր ջրահավաք ավազանով: